ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«Կոմուս» ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/158 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Sheng Zhong	Sheng Zhong	Գիտելիքի, գրի և դպրության օրվան նվիրված Նուբարաշեն վարչական շրջանի 1-ին դասարանցիներին նվիրելու համար անհրաժեշտ է ձեռք բերել 160 հատ դպրոցական պայուսակ համալրված գրենական պիտույքներով՝ յուրաքանչյուրը հետևյալ պարունակությամբ. Պայուսակ դպրոցական՝ պատրաստված բարձրորակ, չթրջվող կտորից, էկոլոգիապես մաքուր, ամուր, խիտ հումքով՝ 100% պոլիէսթեր, զերծ տարատեսակ քիմիական ներկանյութերի հոտերից, մեջքի հատվածում օրթոպեդիկ կառուցվածքով, 30-45սմ լայնությամբ և 40-45սմ բարձրությամբ, հարմարեցված բռնակով և ուսագոտիով: Ուսագոտու լայնքը մոտ 5 սմ՝ պատրաստված հատուկ հարմարավետ փափուկ ներդիրով, որի երկարությունը հնարավոր լինի կառավարել: Պայուսակը ունենա առնվազն 2 առանձին փակվող դարակներ, բարձր որակի շղթայով՝ գլխիկը մետաղական: Հեղուկի շշի համար աջ և ձախ կողային հատվածներում ունենա հատուկ գրպաններ՝ շիշը տեղերում ամրացնելու համար նախատեսված ինքնակպչուն կապիչներով: Պայուսակի ներսում նախատեսված լինի շղթայով գրպանիկ՝ մանր իրերի համար,

			առնվազն 15x20սմ, պայուսակի առջևի մասում նախատեսված լինի շղթայով դարակ՝ առնվազն 30x30սմ չափսի։ Տղաների պայուսակների գերակշող գույնը լինի կապույտ, սև կամ մոխրագույն, աղջիկներինը՝ վարդագույն և մանուշակագույն։ Պայուսակների արտաքին տեսքը, գույները և առանձին քանակները նախատեսված տղաների և աղջիկների համար համաձայնեցնել պատվիրատուի հետ։ Մաթեմատիկայի և մայրենի լեզվի աշխատանքային տետրեր՝ յուրաքանչյուրից առնվազն 3-4 հատ, ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված։ Քանակությունը և ուսումնական դասընթացի նյութերը համապատասխանեցնել տվյալ ուսումնական տարվա ծրագրին։ Գրիչ – 2հատ, կապույտ գույնի, գնդիկավոր, փականով, առնվազն 14-15սմ երկարությամբ, ռետինե կամ սիլիկոնե բռնակով, առնվազն 07մմ սայրով։ Հասարակ մատիտ – 1 հատ, երկարությունը՝ նվազագույնը 18սմ, փափկությունը՝ HB։ Սրիչ- 1 հատ, աղբամանը շարժական կափարիչով, առնվազն 2 բնիկով՝ լայն և նեղ, պլաստմասե։ Ռետին -1 հատ, նվազագույնը 4x3x1,5սմ, էկոլոգիապես մաքուր ու փափուկ հումքից պատրաստված, յուրաքանչյուրը փաթեթավորված։ Քանոն- 1 հատ փայտե կամ պլաստմասսե, ուղիղ գծաբաժանումներով, հարթ եզրերով, լավ մշակված և հղկված, թեթև լաքապատ, երկկողմանի գծանշումներով, երկարությունը՝ առնվազն 30 սմ։ Նկարչական ալբոմ - 1 հատ, առնվազն 24 սպիտակ և հարթ թերթերից բաղկացած, հաստ ստվարաթղթե, նկարազարդ կազմով։ Գունավոր թուղթ – 1 հատ, առնվազն 18 հաստ, որակյալ, երկկողմանի թերթից բաղկացած, հաստ ստվարաթղթե, նկարազարդ կազմով։ Գունավոր մատիտներ – 1 տուփ, առնվազն 24 գույնի /ոչ երկկողմանի/, 6 անկյուն կամ եռանկյուն կտրվածքով, մատիտների տուփը լինի հաստ ստվարաթղթից, մատիտների երկարությունը՝ նվազագույնը 18սմ, փափկությունը՝ HB, պատրաստված էկոլոգիապես մաքուր հումքից։ Գունավոր գրիչ – 6 գույնի գրիչներից բաղկացած, տուփով։ նվազագույնը 20սմ երկարությամբ, 12սմ լայնությամբ։ Մկրատ – 1հատ, գունավոր, կլորացված ծայրերով, նախատեսված թուղթ կտրելու համար։ Գրչատուփ - 1հատ, պատրաստված

			ամուր նկարազարդ կտորից, որակյալ շղթայով: Ամբողջ ապրանքը մատակարարի կողմից պետք է մատակարարվի պատվիրատուին: Մատակարարումը և բեռնաթափումը նշված հասցե պետք է կատարվի մատակարարի կողմից: Տեսականին պետք է նախապես համաձայնեցվի պատվիրատուի հետ: Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքները ենթակա են ետ վերադարձման:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Комус в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/158 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	товарный знак	наименование производителя	технические характеристики
1			